



## Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

(Մանկավարժական գիտու-  
թյունների բեկածու)

### ՀԱՅՐԵՆԱՆՎԵՐ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒՅԻ ԳԱՅԱՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ—ՄԱՏԱՅԱՆ

(1852—1900)



այանե Հովհաննիսյան—Մա-  
տակյանը, որին ժամանակակից-  
ները համարել են «դպրոցական  
պատկառելի գործիչ» (Լեռ), «ան-  
մաշ մանկապարտիզանուէի» (Թեղդիկ),  
«Թուղթի Հայոց մանուկներու կրթական  
դրությունը հեղաշրջող իդեալ կին» (Ար-  
քիարյան), «կովկասահայ ձեռներեց, ան-  
վճատ, անձնվեր, առաջադիմական մանկա-  
վարժուէի» (Սիպիլ), ծնվել է 1852 թվականին  
Թբիլիսիում, հասարակական մեծ դիրք ունե-  
ցող մի ընտանիքում, որի անդամները շատ  
են նպաստել Հայ դպրոցի, գրականության,  
թատրոնի և հասարակական կազմակերպու-  
թյունների զարգացմանը:

Նրա Հայրը նշանավոր բժշկապետ և հա-  
սարակական ականավոր գործիչ Հարություն  
Հովհաննիսյանն էր (1820—1886 թ. թ.), իսկ  
մայրը՝ Եղիսարեթ Հովհաննիսյանը (1830—  
1874 թ. թ.) նույնպես հասարակական  
հայտնի գործիչ էր. նա Պերճ Պոռշյանի  
1861 թվականին Թբիլիսիում հիմնած առա-  
շին Գայանյան և 1869 թվականին հիմնված  
երկրորդ Գայանյան դպրոցների հոգաբար-  
ձուէին էր, որպես Թարեբորժական ընկերու-  
թյան եռանդում անդամ, ձրիարար կատա-  
վարում էր նրա թաղային դպրոցներից մե-  
կը, ամեն կերպ օժանդակում էր Հայ թատ-  
րոնին:

Մատակյանի եղբայրը «Փորձ» և «Արձա-  
գանք» պարբերականների խմբագիր և բազ-  
մաթիվ գրքերի հասարակակիչ Ա. Հովհան-  
նիսյանն էր, իսկ նրա գույքերը եղել են  
դպրոցին և թատրոնին եռանդում աշակցող-

ներ, Հայուհյաց բարեգործական ընկերու-  
թյան՝ գործունյա անդամուէիների:

Մատակյանն իր սկզբնական կրթությունն  
ստանում է Զվիցերիայից եկած ֆրանսուէի  
Ֆավրի պանսիոնում, իսկ հետո տանը՝  
ժամանակի ամենահայտնի ուսուցիչների  
մոտ: Նա ինքնազարգացմանը շատ էր պա-  
րագում և հայոց լեզվի գիտության մեջ խո-  
րանալու նպատակով իրենց տանը կազմա-  
կերպում էր «Հայ գրականության երեկո-  
ներ»:

Մատակյանը 1870 թվականից սկսում է  
թարգմանություններ կատարել ոռակերենից  
և ֆրանսերենից, իսկ 1871 թվականից սկը-  
սում է իր մանկավարժական գործումներու-  
թյունը Թբիլիսիի Գայանյան իգական միջ-  
նակարգ դպրոցում, որտեղ նա մի քանի տա-  
րի ձրիարար դասավանդում է ֆրանսերեն,  
կենդանաբանություն և հաճախ փոխարիթուում  
է ուսուցիչներին: 1878 թվականին Մատակ-  
յանը ձրիարար կատարում է տեսչի պաշ-  
տոնը Խորեն վարդապետ Ստեփանիի Թբի-  
լիսիում: Հիմնած Մարիամյան իգական  
դպրոցում:

Շուտով Մատակյանը հրավեր է ստա-  
նում Քութայիսիի Հայ հասարակությունից՝  
ստանձնելու այնտեղի արական և իգական  
դպրոցների տեսչությունը: Քութայիսիում  
Մատակյանը վրացախոս Հալ երիխանե-  
րի համար բաց է անում մանկապարտեղ:  
Ոգերված մանկապարտեզում իր ունեցած  
բացառիկ հաջողություններով, Մատակյանը  
1881 թվականին անում է Զվիցերիա՝ նախա-

Դպրոցական մանկավարժություն ուսումնասիրելու նպատակով:

1882 թվականի սկզբին Մատակյանը վերադառնում է Թբիլիսի և ստանձնում Հատկապես վրացական շքավոր մանուկների համար կազմակերպված հայկական առաջին ժողովրդական մանկավարժությունը: Այստեղ նա աշխատում է վեց ամիս և երեխաների թիվը՝ հասցնում է 100-ի, ունենալով միայն մի օգնական:

Այդ նույն թվականի օգոստոսի 18-ից մինչև սեպտեմբերի 12-ը Թբիլիսիում Մատակյանը եռանդուն մասնակցություն է

Սակայն Մատակյանի ամենափայլուն ելույթը նրա օրինակելի ցուցադրական պարագաներն էր իր մանկապարտեզի 14 երեխաների հետո նա մեծ վարպետությամբ առաջին անգամ ուսուցչությանը ծանոթացնում է հայկական առաջին ժողովրդական մանկապարտեզին ու նրա դրվածքին և նրանց մեջ բացառիկ հետաքրքրություն է առաջ բերում երեխաների նախադպրոցական դաստիարակության շուրջը, սեր զարթեցնում դեպի մանկապարտեզը: Ականավոր մանկավարժները ն. Տեր-Ղևոնդյանը և Հ. Նազարյանն իրենց հիացմունքն արտահայ-



Բժշկապետ Հարուրյուն Հովհաննիսյանի ընտանեկան խմբանկարը (1873 թ.)  
(Զախից առաջին նստածք օրիորդ Գայան Հովհաննիսյանն է)

ունենում հայոց առաջին ընդհանուր ուսուցական ժողովին՝ Համագումար-դասընթացներին, որտեղ քննարկվեցին մանկավարժական-մեթոդական 19 կարևորագույն հարցեր և տրվեցին 14 օրինակելի դասեր մոտ 200 ուսուցիչների ներկայությամբ: Այստեղ նա գրավում է բոլորի ուշադրությունը և հետաքրքրական ու ինքնօրինակ ելավթներով համագումարի աշխատանքների մեջ թարմ հոսանք է մտցնում: Մատակյանը դեմ է դուրս գալիս ծեծին և իր «արտասովոր կրակոտությամբ» պնդում՝ «Աշկերտներին ուղղելու մի հնարն այն է, որ նրանց շատ սիրենք»:

առամ են հետեւյալ զերմ բառերով: «...Օրիորդի պարապմունքը կենդանի էր, բնական և զարգացուցիչ, այստեղ մանուկների հետ խոսողը նոցա ուսուցչութին չէր: Ո՛չ, դա նրանց սիրասուն բուլըն էր, նոցա գորովագութ մայրը» «...Մանկավարժութին իսկական դաստիարակչութին է, որովհետև սանիկների մեջ նա կարողանում է արմատացնել ընկերասիրության և, որ գլխավորն է, փոխադարձ օգնության նվիրական գաղափարը»:

Մատակյանը համագումարում մանկավարժի այնպիսի մեծ հոշակ է ձեռք բերում, որ անմիջապես հրավիրվում է Հայաստան

որպես Երևանի Գայանյան դպրոցի տեսչություն: Մանկանվեր Մատակյանը, շնորհիվ իր անսպառ եռամդի և անձնագույն շանքերի, շատ կարճ ժամանակում ոչ միայն աշխուժացնում է դպրոցական աշխատանքը (ամեն օր դասեր է լուսմ և անում շատ օգտակար դիտողություններ, վիճելի հարցերը բըն-նարկման զնում մանկավարժական ժողովներում, տոներին կազմակերպում է մանկական հանդեսներ, այցելում է աշակերտների տները և օգնում լքավոր աշակերտներին և այլն), այլև պիր վերա վերցնելով ամեն տեսակ ծախուց հոգացողություն», բաց է անում Հայաստանի առաջին մանկապարտեզը՝ 1882—թվականի նոյեմբերի 15-ին Աստաֆյան (այժմյան Արտվյան) փողոցի վրա գտնվող Մակաշյանի տանը (այժմյան Կենտրոնական ունիվերսալ խանութիւնի տեղը):

Մակայն Մատակյանի մանկավարժական-հասարակական արդյունավետ գործունեությունը Երևանում անսպասելիորեն ընդհատվում է, երբ 1884—1885 թվականներին ցարական կառավարությունը նոր հալածանքներ է սկսում հայ առաջավոր մտավորականության գեմ, Գայանե Մատակյանին և նրա նորապատկ ամուսինին իրավաբան Հայկ Մատակյանին, բժիշկ Լ. Տիգրանյանին և շատ ուրիշներին վարչական կարգով աքսորում են նուաստանի հեռավոր քաղաքներ՝ տրպես ցարական կառավարության համար իրենց ազգային ձգութանքով վուանգավոր գործիչների, որպես հակապետական ուղղությամբ զամապանդողների: Մատակյան ամուսինները իրենց համար որպես աքսորավայր ընտրում են Օդեսան և 1885 թվականի փետրվարի 18-ին հեռանում են Երևանից: Այստեղ 1886 թվականի սեպտեմբերի 26-ին մեռնում է Գ. Մատակյանի ամուսինը, իսկ ինքը շոտուկ գնում է Կոստանդնուպոլիս իրեն ամբողջապես նվիրելու հայ մատաղ սերնդի դաստիարակության վեհ գործին:

Կոստանդնուպոլիսի հայ հասարակությունը Մատակյանին շատ սրտաբաց ընդունեց, և ահա 1887 թվականին նրան հաջողվում է Գատըգյուղ թաղում հիմնել արևմտահայերի առաջին մանկապարտեզը:

«Ռուսահայ մանկավարժուհին-ի տիտղոսը բավական եղավ ազգիու մեր միտքերուն վրա, — գրում է «Անուղանդակ» օրաթերթը (1900 թ., № 494), — սիրով ընդգրկեցինք ինչ նորություն որ բերավ տիկին Մատակյան մեր մեջ ու լավ ըրինք, որովհետև անոր բերած օգուակար նորություն մըն էր: Եր ուղղակի կամ անուղղակի հսկողության տակ մանկապարտեզներ բացավ, Երգը, պարը,

լավ հասկցված զբոսանքը, մարմնամարզը, այսինքն՝ կյանքը, մտավ մեր ծաղկոցներուն մեջ, որոնք անունի փոփոխություն մը միայն շոնեցան «Մանկապարտեզ» կոչվելով, այլ դրության հիմնական փոփոխության մը ենթարկվեցան:.... Առաջ տղաները իրենց գլխուն զարնվածի վլաճակ մը ունեին ու ա, թ, գ չէին կարող սորվիլ, իսկ հիմա այն սիրուն մանկիները կայտուած, ժպտում, աշխույժ, մտացի, ա, թ, գ-ին հիտ և անկի ալ առաջ կարող են սորվիլ ուման զանազան ճյուղերուն տարրական փոփոխները: Պատիկները առաջ վարժարաններն առաջ կայտուած կամաց այն սկսան տան մեջ անհամբեր վարժարան երթալու ժամուն սպասել: Ահա տիկին Մատակյանի գործը»:

Մատակյանի մահից 10 տարի հետո Կոստանդնուպոլիսի «Թյուզանդիոն» օրաթերթը (1910 թ., № 1213) գրում էր. «Ընտրելու համար գործունեության բոլորովին կույս դաշտ մը՝ Կոստանդնուպոլիս եկավ, ուր իր անունը անմոռաց պիտի մնա առհավետ իրուն հեղինակ մանկապարտեզի դրության ընդհանրացման թուրքիո հայոց մեջ: Իր հասցուցած վարժուհիք այսօր ամեն կույմ կգործեն ի Կոստանդնուպոլիս, և իրենց կարգին աշակերտուհիներ հասցուցած են, որք նույն ուղղությամբ կաշխատին գալա-պային դպրոցներու մեջ:

Երկու տարի շանցած, Ակյուտարի Ս. Խաչ վարժարանի հրավերով Մատակյանը նույն վարժարանին կից հաստատում է երկրորդ մանկապարտեզը. «...Կես ամիս չկա, որ բացված է ուսահայ համբավագոր պարտիզանուհի, մանկանվեր Մատակյանի մանկապարտեզը և արդեն երեք տարեկան տղաք ինչքան բան գիտեն.... խաղալով, խնդալով, առանց բառ փնտոելու.... բաղդատություններ կընեն, — գրում է Արքիար Արքիարյանը «Անուելք» թերթուամ (1889 թ., № 1653):

Այդ նույն բանը հաստատում է գրականագետ Երմիթճիպաշյանը իր «Անդկանց գաստիարակության վրա ճառա գըրքուկում»: Նա գրում է. «Եվ արդյոք աշքի պատրանք է, աշքովս տեսա մայրաքաղաքիս մեջ երկու մանկապարտեզներ,.... զորս կվարե տիկին Մատակյան՝ հանրածանոթ ուսահայ պարտիզանուհին: Զորս տարեկան տղաք այդ մանկապարտեզներուն մեջ ավելի բան գիտեն, քան իրենց կրկին և մերժ երեքին տարավոք ընկերակիցները թաղային վարժարանաց մեջ, որք հայերեն կիսուին իրենց տարիքին համար շատ հարուստ բառանով:....»:

Այդ բոլորը նրանից է, որ տիկին Մատակյան հոգով ու մարմնավ իր պարտեզին մեջ է,

իր խելքն ու միտքը իր գործին վրա-է», — բացատրում է Արփիարյանը իր վերոհիշյալ ։ ողվածում և շարունակում. «Հրաշալի բառը ո՞ր պարագային վերապահենք, եթե ներկա պարագային մեջ չփորձածենք զայն»։ Մատակյանի մանկապարտեզում երեխան չի զգում, թե ինչպես նոր բառ, նոր բան է սովորում, քանզի քաղցրահամբույր պարտիզ-պանում վույն բերնեն ընդունված կենդանի դասեր օշարակի կամ նեկտարի կրնան բաղ-դատվիլ. ինչպես օշարակ պիտի խմեր մա-նուկն, այս, այնպես սորվեցավ բան մը, կամ ուրիշ բացատրությամբ՝ ստացավ ծանոթու-թյուն մը», իհարկե, այդ բոլորը զվարի խաղի, հաճելի զրուսանքի և կենդանի, գրա-վիչ զրուցի, պարզագույն փորձերի և իրա-գննական հետաքրքրական դիտողություննե-րի միջոցով։

Մատակյանի սանիկն է եղել նաև Հայկա-կան ՍՍՌ ժողովրդական գերասանութիւնի Ա-րուս Ոսկանյանը, տրը (ինչպես նրա մայրը՝ տիկին Դարրասյանն է ինձ պատմել) շատ էր սիրում տանը երգելով և խաղալով ներ-կայացնել այդ մանկապարտեզում սովորած «Թմբուկ մ'ունիմ շատ գեղեցիկ» և «Կոշկա-կար մը ասեղն առեր» խաղերը։ Ոսկանյա-նը միշտ հիացմունքով է հիշել իր առաջին դաստիարակչութիւնի տիկին Մատակյանին։

Մատակյանը, բացի իր մանկապարտեզը ղեկավարելուց և այնտեղ որպես դաստիա-րակչութիւն (վարժուհի) աշխատելուց, որպես հասարակական տեսչութիւն ղեկավարում է Կաստանդնուպոլսի բազմաթիվ մանկապար-տեզներ։ Նա իր որոշակի դիտողություննե-րով, մեթոդական գործնական ցուցումներով և, մանավանդ, իր ցուցադրական օրինակելի պարապմունքներով օրունչ ու ոգիք է տալիս սկսնակ վարժուհիներին։ Նույն հարցով նա հաճախակի հանդես էր գալիս նաև մամու-լում։

1894 թվականի մայիս և հունիս ամիսնե-րին Մատակյանն այցելում է 18 մանկա-պարտեզ և ցավ է հայտնում, որ չնայած «մանկապարտեզի գաղափարը այնքան սի-րութիր ընդունելություն է գտել ամեն կողմ, բայց ոչ բոլոր ծաղկոցներն են կերպարա-նափոխվել»։ Կան մանկապարտեզներ, որ-տեղ կարդալ-գրել սովորեցնում են ոչ թե վարժուհիները, այլ մի առանձին տառցիչ։ «Միաւ դրություն, — ասում է Մատակյանը. — նախ որովհետեւ տղան պետք է մեկ անձեռ միայն դաս առնե, որպեսզի մեկ դասը մյուս դասին հետ կապվի, և երկրորդ՝ էրիկ-մարդ, նույնիսկ կին մը էրիկ-մարդու ձևերով, չի վայելեր մանկապարտեզին մեջ», քանի որ մանկապարտեզները այնպիսի տարիքի երե-խաների համար են, որոնց համար անհրա-



Տիկին Գայանե Մատակյանը 1890-ական թվականներին Կոստանդնուպոլսում։

ժեշտ են «մայրական խնամքը, մոր կորովը, մոր բնազդը; ինչպես մանկապարտեզ անու-նը ցույց է տալիս՝ մանուկները գրուսերի նման խնամքի պետք ունին, բուլսերի նման օդ, արև կուլըն»։

Կան մանկապարտեզներ էլ, որտեղ վար-ժուհիները առեստրակի մեջեն կարգարով են ողաս տալիս և «ուղ ընելը են տալիս։ Վար-ժուհին պետք է տիրացած ըլլա իր տալիք դասին, ինքն իր ձևով պետք է դաս տա, եթե հնար է սաեղծե, տեսածներուն հարմարցնե, որպեսզի կարենա նույնը պահանջեն տղոց-մի։ Գոյ ընելով միտքը չի մշակվիր, այլ միայն հիշողությունը, — ասում է Մատակ-յանը։ — Վարժուհիները կմոռնան, որ մա-նուկները մրցումներու պես պիտի ու-խատին, պիտի դիտեն, զննեն, պիտի ու-սումնասիրեն ամեն ինչ, որ աշքին կներկա-յանա, ամեն ինչ որ ձեռվնին կառնեն» և ոչ թե շոր ու ցամաք բառեր ու նախադասու-թյուններ առանց հասկանարու ձևականորեն անգիր անհն։

Մատակյանը գեմ է, «որ հարուստները և աղքատները տարբեր սեղաններու վրա կճա-շեն», և վարժուհիները զբաղվում են միայն հարուստներ երեխաներով։ Նրա վրա ամե-

նից վատ տպավորություն է թողնում «Հողաթափներով վարպետ տուտուի տեսակ վարժուհի մը», որը երեխաներին նստեցրել է «ըստ տվյած ամսաթոշակի»:

Մատակյանը լինում է նաև առաջավոր մանկապարտեզներում:

Ահա մի լավագույն մանկապարտեզ, որը նմանվում է ընամնիքի: Այդտեղ 6—7 տարեկան երեխաները խնամում են Յ տարեկաններին: Նրանք աշխատում են մրցյանի պես: Թանջարանոցում ամեն մի երեխա իր աժուն ունի: «Ուսանելե շեն կշտանար, խաղարով ալ կսորվին», — ասում է Մատակյանը:

Մատակյանը հիացած է մի վարժուհու վարքով, որի մանկապարտեզում օրինակելի կարգ ու կանոն է տիրում: «Տղոց աղեկ Կողմերը աշխիս շեն զարներ, այնքան զմայլի է վարժուհին: Այն ի՞նչ դասավանդության եղանակ, այն ի՞նչ անուշ և սիրուն վարմունք տղոց հետո», — ասում է Մատակյանը:

1893 թվականի սեպտեմբերից Մատակյանը մանկապարտեզի վարժուհներ պատրաստերու համար կազմակերպում է կիրակնօրյա միամյա դասընթացներ, որոնք շուտով վերածվում են կիրակնօրյա աղջկանց վարժարանի, ուր վերապատրաստվելու նպատակով սկսում են հաճախել նաև մանկապարտեզում պարապուղ վարժուհները: Մատակյանը ձրիաբար դասախառում է նախադպրոցական մանկավարժություն և սովորեցնում է երգեր ու խաղեր: Կիրակնօրյա վարժարանը իր գորությունը շարունակում է մինչև 1899 թվականը՝ տալով տարեկան 7—10 շրջանավարտ: Կոստանդնուպոլսի ֆրանսիական և թուրքական թերթերը գովարանական հոգվածներ են հատկացնում իր գործին նվիրված և հոմանիստ Մատակյանի այս հիանալի նախաձեռնությանը: Կիրակնօրյա վարժարանն ավարտողները տալիս էին փորձնական դասեր, որոնք քննադատվում էին իրենց դասընկերուհների կողմից: Քննվողները քննադատում էին նաև իրենց այցելած ռազբային և օտար ծաղկոցների դասերը»:

Մատակյանը երազում էր տարրական դպրոցների տառապշուհներ պատրաստելու համար կոստանդնուպոլսում իր տեսչությամբ հիմնել «Վարժապետանոց», որպեսզի հնարավոր լինի նրա շրջանավարտների միջոցով բարեկարգել, վերակազմել նաև նախակրթարանները, որպեսզի մեր տղաքը լեցնեն օտարներու դպրոցները, ուր կմոռնան իրենց մայրենի լեզուն և փոխարեն շեն սորվիր կանոնավոր ելլուպական լեզու մը: Չգիտցած լեզվով ալ առնված ուսմունքը պարույն է»:

Մատակյանը ցանկանալով իգական դրաբոցները ևս նոր և ամուր հիմքերի վրա դնել ծրագրում է հայ տեսչուհներ պատրաստել Եվրոպայում և ահա այդ նպատակով «Հայրենիք» օրաթերթը հաստատում է թոշակ «ի նպաստ այն օրիորդին, որ հանձն պիտի առնե երթալ նանսի և աղջկանց վարժապետանոցներուն վկայական ստանալ»:

Մատակյանը նույն թերթում հանդես է գալիս և կոչ է անում կանանց, որ ոչ թե մեկ աղջկի ուղարկեն նանսի, այլ մի քանի, որպեսզի վերադարձին նրանք միասին կարողանան «պայքարիլ նորի, կանոնավորի, աղենիվի և բարձրի համար», կարողանան բարեփոխել, կազմակերպել աղջիկների դպրոցները, որոնք վարժարան կոչվելու իրավունք շնունեն («Հայրենիք», 1894 թ., № 1015): Խսկ այդ բանը մի հոգու ուժերից վեր կլինի և նա մենակ «ուժ չի տնենա նախապաշարվածների գեմ մաքառելու համար»:

Հայ կանայք արձագանքում են Մատակյանի կոչին: Թերթի միջոցով հանդանակվում է 8 318 զրուց և որոշվում է ուղարկել շրու աղջկի:

Մատակյանը ինչպիսի մեծ դժվարությամբ է կարողանում գտնել համապատասխան թեկնածուներ, համոզել նրանց և ծնողներին, նրանց համար կոստանդնուպոլսում նախապատրաստական ձրի դասընթացներ կազմակերպել, որտեղ նրանց հետ ձրիաբար պարապում էին նշանավոր հայ մանկավարներին ու դրականագետները՝ Ա. Չոպանյանը, Գ. Մալաթյանը, Դ. Խաչկոնցը և ուրիշներ:

Դեպի իր աշխատավոր ժողովուրդը անհուն սիրով տոգորված, «Հիվանդներու խնամակալը Գ. Մատակյանի նախաձեռնությամբ և զանքերով կազմակերպվում են հիվանդապահակների դասընթացներ, որտեղ պատրաստվում են առաջին հայ հիվանդապահության հիները: Նրա շանքերով են հիմնվում թերայի աղքատախնամը, թերայի դարմանատունը, որը իր գոյությունը պահեց երկար ժամանակ և մեծ ծառայություն մատուցեց աղքատ հիվանդներին: Դարմանատանը Մատակյանը իր ձեռքով էր լվանում վերաբռնական գործիքները, ամեն բան իր ձեռքով էր անում: «....թերայի ամենեն մութ և աղքատիկ թաղերու մեջ վերաբռնական գործողությանց առթիվ կաշակցեր անձնվեր բժիշկներու, իր ձեռքով հոգարով անմիջական խնամքները» («Բյուլղանդիոն», 1910 թ., № 1213): Մատակյանը շափահաս աղջիկների համար կազմակերպեց «Արվիստանոց» (կար ու ձեփի դպրոց), եղավ նրա տնօրենը և մեռավ այն պահում, երբ կշանար աղքատ կին հիվանդ-

ներուն համար տուն մը պատրաստել և հատկացնել անոնց»:

Համենայն դեպս, Մատակյանը իրեն բախտավոր է զգում, որ աշատերը օգտվեցան իր դասախոսություններուն, ու իր աշքով տեսավիր հասցուցած մանկավարժութիւններուն գավառները զրկվելու: Ինքը երջանիկ էր այն գաղափարով, թե գավառացի տղաքին ալ պուսեցոց պես զվարի կմեծնան և առանց հոգներու կորովին» («Ըստի», 1908 թ., էջ 212): Այս կապակցությամբ միանգամայն ճիշտ գնահատական է տալիս ժամանակի առաջադիմական օրաթերթ «Հայրենիք»-ը (1895 թ., № 1075), որը խոսելով Մատակյանի մանկավարժական գործունեության մասին, գրում է. «...Իրմուվ է, որ մեր մեջ սկսավ մեր պատիկներուն ճշմարիտ կրթության գործը և նորեն իրմուվ է, որ այդ գործը հետզհետև կհաստատվի ամուր ու կանոնավոր հիմքերու վրա»: Այս մասին խոսում է նաև ականավոր զրականագիտ Սիպիլը Մատակյանի մահից նույնիսկ 31 տարի հետո: Ահա ինչ է գրում նա «Ընդպարձակ տարեցուց»-ում (1931 թ., էջ 127). «Տիկին Մատակյանի գործերը կապրին տակավին և չպիտի մեռնին», քանի որ նա ոչ միայն արևմտահայերի մանկապարտեզի հիմնադիրն եղավ և հարատեսրեն վարեց այն, այլև «անոր շարտնակությունն ապահովերու համար հաստատեցանթացք մը, որմե օգտված են ժամանակին բոլոր դեռատի մանկավարժութիւնները»:

Արևմտահայ մամուկի և զրականության կողմից չերմորեն զնահատված «անմահ մանկապարտիզանուէհ» Մատակյանը սուլթանական բռնակարության ամենածանր պայմաններում կարողացավ հեղաշրջել մեր ժատաղ սերնդի օլրթական դրությունը՝ զորավիր ունենալով պոլսեցի գրագիտներու, զարգացյալ երիտասարդներու և երիտասարդութիւններու խումբ մը, և վահան՝ «Հայրենիք»-ը, որ անձնվեր մանկավարժութիւնն իրը

իդեալ կին կներկայացներ Թուրքիո հայցը<sup>1</sup>, Ահա թե ինչու «ամիկին Մատակյանը բնավլ մոռցվելիք կին մը չէ, մանավանդ որ հաջորդ մը չունեցավ տակավին, գոնե մոտավորապիս իր գործունեությունը հիշեցնող»<sup>2</sup>:

Ժթ դարավերջի հայ մանկավարժության զեմոկրատական հոսանքի ականավոր ներկայացուցիչներից մեկը՝ հայրենանվեր Գայանե Հովհաննիսյան-Մատակյանը չի կարող մոռացվել առավել ևս Սովետական Հայաստանում, որովհետև նա ոչ միայն եղել է Թրիլիսիի հայկական ժողովրդական մանկապարտեզի հիմնադիրը, այլև ցարական կառավարության ռեակցիայի ամենադաժան տարիներին Հայաստանի առաջին մանկապարտեզի հիմնադիրն ու ղեկավարը, ինչպես և Հայաստանի առաջին իդական միջնակարգ դպրոցի շնորհալի տեսչունին, որի մանկավարժական հմտության և վարպետության մասին գովեստով են խոսել նրա ժամանակակիցները:

Տաղանդավոր մանկավարժութիւն Մատակյանի բեղմնավոր գործունեությունը գեռ չի ուսումնասիրված: Սա նախնական փորձ է այդ ուղղությամբ: Մենք այսուել կանգ առանք բոցաշունչ հայրենասիրի, և այն էլ շատ թուցիկ կերպով, միայն մանկավարժական-հասարակական պրակտիկ գործունեության վրա, համոզված լինելով, որ Մատակյանի մանկավարժական հայացքների խոր և մանրազնին ուսումնասիրությամբ մանկավարժական մամուլ և առանձին մենագորություններով հանդիս կդան հայ նախադպրոցական մանկավարժության պատմությամբ զբաղվող մասնագետները:

<sup>1</sup> Արքիար Արքիարյան, «Իդեալ կինը» («Նոր կյանք» ամսագիր, Լոնդոն, 1900 թ., էջ 313):

<sup>2</sup> Զարուհի Գալեմբյարյան, «Կին մը» (Ա. Անտոնյանի «Գանձարան» դասագիրը, բարձրագույն զարդարաց, Կոստանդնուպոլիս, 1914 թ., էջ 37):

